*ՆԱԽԱԳԻԾ*

# *ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

«____» _____________ 2015թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

## *ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում 2015-2016 թվականներին հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 456-Ն որոշման հավելվածի 2-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

### « **II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

Ծրագրով նախատեսվում է հատկացնել 40 000 000 ՀՀ դրամ, որից 8 000 000 ՀՀ դրամը 2015 թվականի պետական բյուջեով «Թթայգիների զարգացման ծրագիր» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, մյուս մասը կնախատեսվի 2016 թվականի պետական բյուջեով (Աղյուսակ 1):

***Աղյուսակ 1***
***/ՀՀ դրամ/***

Նշված ֆինանսական միջոցներով «Ասմարյան Գրին Լանդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Սիրիայի Արաբական Հանրապետությունից ձեռք կբերվեն և Լեռնային Ղարաբաղի

| *Ներդրումների նպատակը* | *Ընդամենը* | *Այդ թվում՝* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***2015 թվականի՝ ըստ եռամսյակների*** | | | | ***2016 թվականի՝ ըստ եռամսյակների*** | | | |
| | | ***1-ին*** | ***2-րդ*** | ***3-րդ*** | ***4-րդ*** | ***1-ին*** | ***2-րդ*** | ***3-րդ*** | ***4-րդ*** |
| Թթենու տնկիների տրամադրում | 40 000 000 | | | 8 000 000 | | 32 000 000 | | | |

Հանրապետություն կներկրվեն մեկից երկու տարեկան թթենու բարձրորակ տնկիներ:

Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված համապատասխան տարածքային կառավարման մարմինները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (այսուհետ՝

վարչակազմեր) կողմից սահմանված ժամկետում, հիմք ընդունելով հողօգտագործողների թթենու տնկիների պահանջարկի մասին դիմումները, անձնագրերի պատճենները, իսկ թթայգի հիմնադրելու դեպքում նաև անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական) պատճենները, վարչակազմերին են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, պահանջվող տնկիների քանակը, իսկ թթայգի հիմնադրելու դեպքում նաև վկայականի համարը:

Վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրվում է համապատասխան տեղեկանք:

Վարչակազմերը, մինչև 2015 թվականի դեկտեմբերի 15-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում համապատասխան հայտեր՝ նշելով համայնքը և պահանջվող տնկիների քանակը:

Նախարարությունը ներկայացրած հայտերի հիման վրա տնկիներն տրամադրում է վարչակազմերին, իսկ վարչակազմերը տնկիներն անհատույց տրամադրում են հողօգտագործողներին՝ նպատակային օգտագործման և պատշաճ մշակության պայմանով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով տնկիների տրամադրման գործընթացի, տրամադրված տնկիների նպատակային օգտագործման և պատշաճ մշակության վերահսկման նպատակով ստեղծվում է հանձնաժողով:

Տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում կամ ոչ պատշաճ մշակության հետևանքով չորացած տնկիների արժեքը (մեկ տնկու արժեքը կազմում է 2 000 ՀՀ դրամ) հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ*
*ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ* *Ա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**
**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

***Անհրաժեշտությունը***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների ընթացքի վերահսկման անհրաժեշտությամբ:

***Ընթացիկ իրավիճակը և խնդիրները***

Որոշման նախագծի խնդիրն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում ծրագրով տրամադրվող թթենու տնկիների նպատակային օգտագործման ապահովումը:

***Նպատակը և բնույթը***

Ծրագրի նպատակը գյուղատնտեսության ոլորտում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար նախադրյալների ստեղծումն է:

***Ակնկալվող արդյունքները***

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում թթագործության ճյուղի զարգացման առաջընթաց:

***Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք***

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժինների կողմից:

***Այլ տեղեկություններ***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապտության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ՄԽՈՅԱՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա. ՄԽՈՅԱՆ

***ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***
***«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 456-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

*ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ*
*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ*

## *ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ*

*Որոշման նախագծի անվանումը`*
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 456-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

*Նախագիծը ներկայացնողը`*

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

*ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել`*

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ շրջաններ

**Նախագիծը պատրաստողը`**

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին

_____________________ **Վ. Ավետիսյան**
(ստորագրությունը)

«______» ________________ 2015թ.